# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «1193. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի շրջանակում «11001. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ»-ի վերաբերյալ**

**(2026թ. հունվար-հունիս)**

«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ը **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում**[1] իրականացրել է հետևյալ միջոցառումները.

## 1. ԿՁԱՊԿ/ԿԱՊԿ գնահատում (0-6, 6-18 տարեկան երեխաներ)

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի և կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվել է Կենտրոնի **Գնահատման բաժնի կողմից**:

**2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- **ԿՁԱՊԿ և ԿԱՊԿ գնահատման գործընթացների վերաբերյալ ՏՄԱԿ-ների մասնագետների կարողությունների կատարելագործում** գնահատման գործընթացի մասնակցության և գնահատման արձանագրությունների վերլուծության միջոցով.
  - ✓ **26 ԿՁԱՊԿ** գնահատման գործընթացի վերլուծություն, այդ թվում՝ ՏՄԱԿ-ների կողմից գնահատված **2 սովորողի ԿԱՊԿ** գնահատման բողոքարկման,
  - ✓ **34 ԿԱՊԿ** գնահատման գործընթացի վերլուծություն:

- **ՏՄԱԿ-ների կողմից գնահատված 2 սովորողի ԿԱՊԿ գնահատման բողոքարկում,** որի արդյունքում որոշում է կայացվել **1 սովորողի** ԿԱՊԿ գնահատման եզրակացությունը վերանայել, իսկ **1 սովորողի** ԿԱՊԿ գնահատման եզրակացությունը թողնել անփոփոխ:

- Ազատազրկման ձևով պատիժ կրող (կամ կալանավորված) **1 անչափահասի ԿԱՊԿ գնահատում:**

- **Գնահատման բաժինը** ակտիվ մասնակցություն է ցուցաբերել բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների կրթության առանձնահատուկ

---

[1] Հաշվետվությունը ներկայացված է աճման կարգով՝ ընդգրկելով 2026-թ. առաջին կիսամ~~եռամս~~յակի ընթացքում իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը:

պայմանների կարիքի գնահատման գործընթացին:

## 2. ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրում

Աջակցության ծառայություններ տրամադրում է Կենտրոնի **Մանկավարժահոգեբանական աջակցության բաժինը**:

**2026թ․ առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների շարունակական տրամադրում նախադպրոցական տարիքի **26 երեխայի (19 տղա, 7 աղջիկ):**
- Կենտրոնի «ՄԻԱՍԻՆ» ներառական թատերախմբի երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտում և թատերական արվեստի միջոցով նրանց լիարժեք ներգրավվածության ապահովում հասարակական կյանքում:
- Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների հետ համատեղ փորձի փոխանակման աշխատանքների իրականացում, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող թիմի անդամների աշխատանքների որակի և արդյունավետության դիտարկումներ, քննարկումներ:

## 3. Բողոքների, ահազանգերի կամ դիմումների հիման վրա բռնության կամ բուլինգի դեպքերի ուսումնասիրություն

Բռնության, բուլինգի, սոցիալապես ոչ ընդունելի վարքային դրսևորումների և խնդրահարույց դեպքերի վերաբերյալ դիմումների ընդունման, դրանց ուսումնասիրության, փաստերի հավաքագրման և փաստաթղթավորման, ինչպես նաև ուսումնասիրման արդյունքում ստացված տվյալների վերլուծության և խնդրի համալիր լուծման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացման աշխատանքներն իրականացվում են **ՀՄԿ Սոցիալ-հոգեբանական անվտանգության ապահովման բաժնի** կողմից:

**2026թ․ առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- **80 դեպքի ուսումնասիրություն** 17 ՏՄԱԿ-ների սպասարկման տարածքներում գտնվող **73 ուսումնական հաստատություններում, որոնցից՝ 44 հիմնական, 22 միջնակարգ, 1 ավագ, 3 հատուկ դպրոց, 2 քոլեջ, 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն:**

  Բողոքների, ահազանգերի կամ դիմումների հիման վրա ստացված 80 դեպքերից **69-ը ճանաչվել է որպես բռնության այս կամ այն ձևի դրսևորում:** Դեպքերի ճնշող մեծամասնությունը տեղի է ունեցել հիմնական կամ միջնակարգ դպրոցներում:

  - ✓ Ֆիզիկական բռնություն՝ 27 դեպք
  - ✓ Հոգեբանական բռնություն՝ 24 դեպք
  - ✓ Հոգեբանական բուլինգ՝ 12 դեպք
  - ✓ Սեռական բռնություն՝ 4 դեպք
  - ✓ Ֆիզիկական բուլինգ՝ 2 դեպք
  - ✓ Անտեսում՝ 1 դեպք

4 դեպքում խնդիրները վերաբերել են ուսումնական հաստատությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտին, 6 դեպքում առկա են եղել այլ խնդիրներ:

## 4. Մասնագիտական կարողությունների զարգացում

Մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներն իրականացվում են **ՀՄԿ Վերապատրաստումների և մեթոդական աջակցության բաժնի** կողմից:

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Մշակվել է ՏՄԱԿ-ների և ուսումնական հաստատությունների մասնագետների, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված **3 նոր մոդուլային դասընթաց** հետևյալ թեմաներով՝

- ✓ Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության դեպքերի արձագանքման և ուղղորդման ընթացակարգ:
- ✓ Խնդրահարույց վարքի գնահատումը, կանխարգելումն ու միջամտությունը դպրոցական միջավայրում:
- ✓ Գիտակից ծնողավարությունը որպես երեխայի զարգացման կարևոր գործոն:

2. Իրականացվել է մասնագիտական կարողությունների կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված **172 վերապատրաստման դասընթաց** ՏՄԱԿ-ների ՄՀ աջակցության ծառայություններ տրամադրող և ԿՁԱՊԿ/ԿԱՊԿ գնահատումներ իրականացնող, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատող հանդիսացող **3445 մասնագետի համար**: Ընդհանուր առմամբ վերապատրաստման դասընթացներին ընդգրկվել են **905 հաստատությունների** ներկայացուցիչներ **(24 ՏՄԱԿ, ՀՄԿ և 880 ուսումնական հաստատություն)**: Իրականացվել են նաև «Գիտակից ծնողավարությունը որպես երեխայի զարգացման կարևոր գործոն» և «Իրազեկ ծնողները ձևավորում են ուժեղ և աջակցող համայնք» թեմաներով դասընթացներ ծնողների և ծնող-մանկավարժների համար: Վերապատրաստումների և վերապատրաստման մասնակիցների թիվն ըստ թեմաների ներկայացված է Աղյուսակ 1-ում: Դասընթացներն իրականացվել են ինչպես առկա, այնպես էլ առցանց ձևաչափով:

*__Աղյուսակ 1.__ Վերապատրաստման դասընթացների և մասնակիցների թիվն ըստ թեմաների*

| ՀՀ | Վերապատրաստման դասընթացի թեմա | Վերապատրաստումների թիվ | Վերապատրաստվածների թիվ |
|---|---|---|---|
| 1. | Կրթությանն աջակցող միջոցներ՝ մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 20 | 493 |
| 2. | Ապահով և անվտանգ կրթական միջավայր | 1 | 15 |
| 3. | Այլընտրանքային հաղորդակցման սարքավորումներ | 4 | 56 |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության դեպքերի արձագանքման և ուղղորդման ընթացակարգ | 9 | 203 |
| 5. | Խնդրահարույց վարքի գնահատումը, կանխարգելումն ու միջամտությունը դպրոցական միջավայրում | 18 | 288 |
| 6. | Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի աշխատանքային գործիքակազմը | 7 | 194 |
| 7. | Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի դերը և գործառույթները, աշխատանքային գործիքակազմը | 13 | 222 |
| 8. | Դասարանի և վարքագծի կառավարում | 1 | 15 |
| 9. | Ռեսուրս դասարան փորձարարական մոդելի մեթոդաբանությունը | 1 | 18 |
| 10. | Ընտանիք-դպրոց համագործակցություն | 6 | 142 |
| 11. | Մանկական վախերը և տագնապները՝ որպես խոչընդոտ երեխայի սոցիալականացման գործընթացում | 5 | 89 |
| 12. | Ծնողների դերը և կարևորությունը հատուկ մանկավարժական աշխատանքում | 7 | 164 |
| 13. | Ինչպես խթանել երեխայի խոսքի զարգացումը | 4 | 81 |
| 14. | Մկանային լարվածության կարգավորումը պարային խաղ-վարժությունների միջոցով | 15 | 229 |
| 15. | Ճամփորդել «ուրիշի կոշիկներով» | 10 | 145 |
| 16. | Կոշտ և փափուկ | 8 | 119 |
| 17. | Նեյրոռեաբիլիտացիա | 3 | 23 |
| 18. | Երեխաների սոցիալական հմտությունների զարգացումը և ընտանիք-ՆՈՒՀ համագործակցությունը | 4 | 94 |
| 19. | Հոդված գրելու արվեստը | 1 | 18 |
| 20. | Աուտիզմ ունեցող երեխաների սոցիալական հմտությունների զարգացման արդյունավետ մոդելներ | 1 | 72 |
| 21. | «Թաղանթ և միջուկ» | 7 | 104 |
| 22. | Գիտակից ծնողավարությունը որպես երեխայի զարգացման կարևոր գործոն: | 21 | 448 |
| 23. | Ընտանիքում բռնության դեպքերին արձագանքելու և ուղղորդելու մեխանիզմներն ու առանձնահատկությունները | 4 | 104 |
| 24. | Ծնողավարման մասին՝ համառոտ | 1 | 52 |
| 25. | Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների տնային ուսուցման իրականացման | 1 | 57 |

| | | | |
|---|---|---|---|
| | առանձնահատկությունները. գործնական խորհուրդներ ծնողներին | | |
| | **Ընդհանուր թիվ** | **172** | **3445** |

3. Վերապատրաստումների և մեթոդական աջակցության բաժնի կողմից **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է** մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների վերլուծություն և գնահատում հետևյալ ուղղություններով.

- Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման համար դիմած **22 մանկավարժական աշխատողի** փաստաթղթային փաթեթներում առկա Անհատական ուսուցման և զարգացման պլանների ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում:
- Հանրակրթական ուսումնական հաստատությունների **988 ուսուցչի** կողմից տարակարգի շնորհման համար ներկայացված փաստաթղթային փաթեթներում առկա տեսագրությունների ուսումնասիրություն՝ ուսումնական գործընթացի ներառականության ու մասնակցայնության ապահովման գնահատման նպատակով:
- «Տարվա լավագույնները» մրցույթի շրջանակում ՏՄԱԿ-ի (կամ պետության կողմից պատվիրակված մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպության) Ամսվա լավագույն հոգեբանի, լավագույն սոցիալական մանկավարժի և լավագույն հատուկ մանկավարժի անվանակարգերի համար ներկայացված **48 փաթեթի** ուսումնասիրություն և գնահատում:

## 5. Խորհրդատվությունների տրամադրում

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել է **1348 խորհրդատվություն,** որը 102-ով ավելի է պլանավորված միավորից՝ պայմանավորված ուսումնական հաստատությունների ֆիզիկական և խելամիտ հարմարեցումների մշտադիտարկումների ընթացքում տրամադրված խորհրդատվություններով: Խորհրդատվությունները տրամադրվել են **511 հաստատությունների** (**ՀՄԿ-ի, 24** ՏՄԱԿ-ների և **486** ուսումնական հաստատություններ) **3687 մանկավարժական** և **վարչական աշխատողների** (դպրոցների, ՆՈՒՀ-երի և ՄԿՈՒ-ների մանկավարժներ, ուսուցչի օգնականներ, աջակցող մասնագետներ, ծնողներ, տնօրեններ, տնօրենի տեղակալներ և այլն): Խորհրդատվություններն իրականացվել են Կենտրոնի բոլոր բաժինների կողմից:

**Խորհրդատվություններն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝**

- *ԿՀԱՊԿ/ԿԱՊԿ գնահատման գործընթաց*

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Գնահատման բաժնի կողմից տրամադրվել է գնահատման գործընթացին առնչվող **186 խորհրդատվություն** կրթական գործընթացի **371 մասնակցի** (դպրոցների ուսուցիչներ,

մանկավարժահոգեբանական աջակցության թիմեր, վարչական աշխատակիցներ, ծնողներ, ՆՈՒՀ-երի, ՄՈՒՀ-երի, քրեակատարողական հաստատությունների մանկավարժական աշխատողներ)։ Խորհրդատվությունները տրամադրվել են ՀՄԿ-ում, ՏՄԱԿ-ներում[2], **93** ուսումնական հաստատությունում (**22** ՆՈՒՀ, **69** ՀՈՒՀ և **2** ՄՈՒՀ) և **1** ՔԿՀ-ում։ ԿԶԱՊԿ/ԿԱՊԿ գնահատման վերաբերյալ խորհրդատվությունները տրամադրվել են Գնահատման բաժնի մասնագետների կողմից։

- *Մասնագիտական կարողությունների կատարելագործում*

Վերապատրաստումների և մեթոդական աջակցության բաժնի կողմից **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** տրամադրվել է մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված **239 խորհրդատվություն** կրթական գործընթացի **1303 մասնակցի** (ՏՄԱԿ-ների մասնագետներ, դպրոցների ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակներ, դայակներ, մեթոդիստներ, մանկավարժահոգեբանական աջակցության թիմեր, վարչական աշխատակիցներ, ծնողներ)։ Խորհրդատվություն ստացած մասնակիցների թիվը տոկոսային հարաբերությամբ ներկայացված է Գծապատկեր 4-ում։ Խորհրդատվությունները տրամադրվել են ՀՄԿ-ում, ՏՄԱԿ-ներում և 193 ուսումնական հաստատություններում (33 ՆՈՒՀ, 156 ՀՈՒՀ և 4 ՄՈՒՀ)։

**Գծապատկեր 4.** *Խորհրդատվություն ստացած մասնակիցների թիվը տոկոսային հարաբերությամբ*




[2] ՏՄԱԿ-ների և ՀՄԿ-ի թիվը աճողական չէ և հաշվվում է մեկ անգամ։

- *ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ*

  Մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի կողմից **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** տրամադրվել է մասնագիտական ծառայությունների վերաբերյալ **269 խորհրդատվություն** կրթական գործընթացի **883 մասնակցի** (ծնողներ, մանկավարժահոգեբանական աջակցության թիմեր, դպրոցների ուսուցիչներ, վարչական աշխատակիցներ): Խորհրդատվությունները տրամադրվել են ՀՄԿ-ում, ՏՄԱԿ-ներում և **77** ուսումնական հաստատություններում (**42 ՀՈՒՀ, 35 ՆՈՒՀ**): Ինտենսիվ մասնագիտական խորհրդատվություններ են տրամադրվել Վայոց ձորի և Արարատի մարզերում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մասնագետներին:

- *Ուսումնամեթոդական նյութերի մշակում/փորձաքննություն*

  Բովանդակային մշակումների բաժնի կողմից **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել է **31 խորհրդատվություն**: Խորհրդատվությունները տրամադրվել են ուսումնամեթոդական նյութերի մշակման վերաբերյալ **ՀՄԿ-ի, ՏՄԱԿ-ների** և ոլորտում գործող տարբեր հասարակական կազմակերպությունների **65 անձի**: Խորհրդատվությունները տրամադրվել են **31** ուսումնական հաստատություններում (**31 ՀՈՒՀ**):

- *Ուսումնական հաստատություններում բռնության և բուլինգի դեպքերի վերաբերյալ*

  **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Սոցիալ-հոգեբանական անվտանգության ապահովման բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն **7 դեպքի շրջանակում**՝ ուղղված դպրոցների տնօրեններին, փոխտնօրեններին, դասղեկներին, հոգեբաններին, ինչպես նաև սովորողներին, նրանց ծնողներին և դեպքերին առնչվող մանկավարժական աշխատողներին: Ընդհանուր առմամբ խորհրդատվություն է տրամադրվել **75 ուսումնական հաստատության 348 անձի**:

  **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Սոցիալ-հոգեբանական անվտանգության ապահովման բաժնի կողմից ձևավորվել է խորհրդատվության (սուպերվիզիայի) 6 խումբ, որոնցում ընդգրկվել է ՏՄԱԿ-ների և դպրոցների 58 հոգեբան, իրականացվել է 17 խորհրդատվություն:

Բոլոր խորհրդատվություններն իրականացվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևաչափով՝ առցանց կամ առերես:

- *Հաշվետվությունների կազմման հետ կապված խորհրդատվություններ*

  **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Մշտադիտարկման և տվյալների հավաքագրման բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվական աջակցություն ՀՄԿ-ի և ՏՄԱԿ-ների մասնագետներին ու վարչական աշխատողներին՝ նպատակ

ունենալով աջակցել տվյալների հավաքագրման, հաշվետվությունների կազմման, տեղեկատվական համակարգերի լրացման, 2-րդ և 3-րդ դասարան առաջին անգամ ընդունված սովորողների տվյալների հավաքագրման, ինչպես նաև 2026թ. միջոցառումների պլանի և խելամիտ հարմարեցումների իրականացման գործընթացներին:

Նշված աշխատանքների շրջանակում՝

- տրամադրվել է ընդհանուր առմամբ **508 խորհրդատվություն**
- **632 մասնագետի և վարչական աշխատողի**
- **25 հաստատությունում** (ՀՄԿ և ՏՄԱԿ)

Խորհրդատվությունները նպաստել են աշխատակիցների մասնագիտական հմտությունների ամրապնդմանը և գործընթացների արդյունավետ իրականացմանը՝ համաձայն բաժնի կողմից մշակված պահանջների և ստանդարտների:

- *Իրավախորհրդատվություն*

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Կենտրոնի գործունեության և ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տրամադրվել է 23 խորհրդատվություն, որոնցից օգտվել է 27 աշխատակից և Կենտրոն դիմած մասնագետ: Խորհրդատվությունները տրամադրվել են Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի իրավախորհրդատուի կողմից՝ ինչպես Կենտրոնում, այնպես էլ հեռավար ձևաչափով:
Կենտրոնի կողմից բոլոր խորհրդատվություններն իրականացվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևաչափով, առցանց կամ առերես: Պլանավորված խորհրդատվությունների մեծ մասը տրամադրվել է ՏՄԱԿ-ների և ուսումնական հաստատությունների գործունեության մշտադիտարկման արդյունքում:

## 6. Մշտադիտարկում

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** ՀՄԿ-ի կողմից իրականացվել է ԿԶԱՊԿ/ԿԱՊԿ գնահատման, ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման և ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի և խելամիտ հարմարեցումների ապահովման մշտադիտարկումների գործընթացների **356 մշտադիտարկում**: Մշտադիտարկումներն իրականացվել են **382 հաստատությունում՝ ՀՄԿ, 24 ՏՄԱԿ** և դրանց ամրակցված **357 ուսումնական հաստատություն:**

Մշտադիտարկումներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

- *ԿԶԱՊԿ/ԿԱՊԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում*

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Գնահատման բաժնի կողմից իրականացվել է **11 մշտադիտարկում 71 հաստատությունում** (61 ՀՈՒՀ և 10 ՆՈՒՀ): Յուրաքանչյուր մշտադիտարկման ժամանակ եռօրյա այցեր են իրականացվել ՏՄԱԿ-ներ, նրանց սպասարկման տարածքում գտնվող ՆՈՒՀ-եր, դպրոցներ,

ՄՈՒՀ-եր:

- ***ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման և ԿՁԱՊԿ/ԿԱՊԿ գնահատման կարգերի և ընթացակարգերի մշտադիտարկում***

***2026թ. առաջին կիսամյակի ընթացքում Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի կողմից ընդհանուր առմամբ իրականացվել է ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման և ԿՁԱՊԿ/ԿԱՊԿ գնահատման կարգերի և ընթացակարգերի պահպանման վերաբերյալ 25 մշտադիտարկում՝ 206 հաստատությունում (173 ՀՈՒՀ, 33 ՆՈՒՀ):***

- *ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման որակի և արդյունավետության մշտադիտարկում*

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի կողմից իրականացվել է ՄՀ աջակցության ծառայությունների տրամադրման որակի և արդյունավետության **24 մշտադիտարկում 77 հաստատությունում** (**42** ՀՈՒՀ և **35** ՆՈՒՀ):

- *Ուսումնական հաստատություններում բռնության և բուլինգի դեպքերով պայմանավորված սոցիալ-հոգեբանական անվտանգության մշտադիտարկում*

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Սոցիալ-հոգեբանական անվտանգության ապահովման բաժնի կողմից իրականացվել է **10 մշտադիտարկում**՝ ուղղված Հանրապետական թիվ 1 կրթահամալիրից հանրակրթական տարբեր ուսումնական հաստատություններ և ուսումնարաններ տեղափոխված սովորողների՝ կրթական գործընթացում ներառման գնահատմանը: Մշտադիտարկումներն իրականացվել են **3 ուսումնական հաստատությունում**:

- *Տվյալների բազայի վերլուծություն և մշտադիտարկում*

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** Մշտադիտարկման և տվյալների հավաքագրման բաժինն իրականացրել է **238 մշտադիտարկում** ՀՀ տարբեր կրթական հաստատություններում՝ ներառյալ **24 ՏՄԱԿ և ՀՄԿ**:

  - Իրականացվել է **192 մշտադիտարկում**՝ ՀՄԿ-ի և ՏՄԱԿ-ների ամենամյա և եռամսյակային հաշվետվությունների ներկայացման և դրանց համապատասխանության գնահատման նպատակով:
  - Իրականացվել է **5 թեմատիկ մշտադիտարկում**, որոնք վերաբերում էին՝
    - ✓ ուսումնական հաստատությունների ցանկերի (ՆՈՒՀ, դպրոց, ՄԿՈՒ) արդիականությանը,
    - ✓ կամավոր ատեստավորման մասնակցած հոգեբանների տվյալների ճշգրտությանը,
    - ✓ երկարօրյա խմբեր հաճախող երեխաների տվյալների հավաքագրմանը և մշտադիտարկմանը,
    - ✓ մինչև 5 տարեկան ԿՁԱՊԿ ունեցող երեխաների տվյալների

հավաքագրմանը

- ՀՀ դպրոցներում աշխատող ուսուցչի օգնականների և հոգեբանների տվյալների հավաքագրմանը և համակարգմանը:

- Իրականացվել է **24 մշտադիտարկում** հեռավար ձևաչափով:

  Կազմակերպվել և իրականացվել է **48** հեռախոսային հարցում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից տրամադրված ծառայությունների գնահատման նպատակով: Հարցմանը մասնակցել է **464** ծնող և 62 ուսուցիչ: Հարցումները ներառել են հետևյալ ուղղությունները՝

  - կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատման վերաբերյալ
  - մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ
  - իրականացված վերապատրաստումների վերաբերյալ
  - տրամադրված խորհրդատվությունների վերաբերյալ:

- Իրականացվել է **12 էլեկտրոնային գրանցամատյանների մշտադիտարկում՝**

  Իրականացվել է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների էլեկտրոնային գրանցամատյանների վարման վերաբերյալ մշտադիտարկում, որի շրջանակում իրականացվել է գնահատում անցած և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստացող սովորողների տվյալների համեմատական վերլուծություն, ինչպես նաև ուսումնասիրվել են աջակցության տրամադրման ժամկետները:

- **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է նաև 5 թեմատիկ հետազոտություն՝**

  - «7-8 տարեկան երեխաների հոգեբանական հարմարում»,
  - «Ուսումնական հաստատություններում խելամիտ հարմարեցումներ»,
  - «Ուսումնական հաստատություններում ֆիզիկական միջավայրի մատչելիություն»,
  - «Տարրական դասարաններում ուսուցանվող առարկաների հարմարեցված աշխատանքային գիրք-տետրերի կիրառության արդյունքների ուսումնասիրություն»,
  - «Անվտանգ և ապահով կրթության տարի» միջոցառումների ազդեցության գնահատում:

Հետազոտությունների արդյունքները ենթարկվել են համապարփակ վերլուծության:

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 8-ի N 02/11.4/11184-2025 հանձնարարականի կատարման շրջանակում Լոռու և Արարատի մարզերի ուսումնական հաստատություններում իրականացվել է նաև ֆիզիկական մատչելիության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար խելամիտ հարմարեցումների ապահովման գործընթացի համակարգված մշտադիտարկում:

## 7. Ուսումնամեթոդական նյութերի մշակում, հրապարակում և ձեռքբերում

Ուսումնաօժանդակ և ուսումնամեթոդական նյութերի մշակումն իրականացվել է **Բովանդակային մշակումների և Վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժինների կողմից**, որոնցում ներգրավված են բաժինների բոլոր մասնագետները:

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ուսումնամեթոդական **10 անուն գրականության մշակում**.
    - ✓ Հանրակրթական դպրոցի հինգերորդ դասարանի ուսումնական դասընթացի շրջանակում «Կերպարվեստ 5» առարկայի աշխատանքային գիրք-տետրի մշակում: Իրականացվել է համապատասխան ծրագրային թեմաների պարզեցում, հարմարեցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և մտավոր/ինտելեկտուալ խնդիրներ ունեցող սովորողների համար:
    - ✓ Հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի ուսումնական դասընթացի շրջանակում «Մայրենի 4» առարկայի աշխատանքային գիրք-տետրի մշակում:
    - ✓ Հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի ուսումնական դասընթացի շրջանակում «Մաթեմատիկա 4» առարկայի աշխատանքային գիրք-տետրի մշակում:
    - ✓ Հանրակրթական դպրոցի հինգերորդ դասարանի ուսումնական դասընթացի շրջանակում «Անգլերեն 5» առարկայի աշխատանքային գիրք-տետրի մշակում:
    - ✓ «Երեխաների հոգեկան առողջության խթանում և հոգեսոցիալական տոկունության բարձրացում» ձեռնարկ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների և հոգեբանների համար:
    - ✓ Հանրակրթական դպրոցի հինգերորդ դասարանի ուսումնական դասընթացի շրջանակում «Տեխնոլոգիա 5» առարկայի աշխատանքային գիրք-տետրի մշակում:
    - ✓ «Աջակցում ենք ուսուցչին սովորողի խոսքի և հաղորդակցման հմտությունների զարգացման գործընթացում» ձեռնարկի մշակում:
    - ✓ «Աջակցում ենք ուսուցչին սովորողի շարժողական հմտությունների զարգացման գործընթացում» ձեռնարկի մշակում:
    - ✓ «Աջակցում ենք ուսուցչին սովորողի սոցիալական մանկավարժության հմտությունների զարգացման գործընթացում» ձեռնարկի մշակում:
    - ✓ Հանրակրթական դպրոցի հինգերորդ դասարանի ուսումնական դասընթացի շրջանակում «Կերպարվեստ 5» առարկայի աշխատանքային գիրք-տետրի ուսուցչի ձեռնարկի մշակում:
    - ✓ Հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի ուսումնական դասընթացի շրջանակում «Մայրենի 4» առարկայի աշխատանքային գիրք-տետրի ուսուցչի ձեռնարկի մշակում:

- **ԿՁԱՊԿ/ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների և ուսուցիչների համար 23 դիդակտիկ և ուսումնաօժանդակ նյութի մշակում:** Դիդակտիկ նյութերը մշակվել են Մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի կողմից:

- **Բովանդակային նյութերի փորձաքննություն:**
  - ✓ ՀՄԿ և ՏՄԱԿ-ների մասնագետների, ինչպես նաև կրթական տարբեր հաստատությունների, կազմակերպությունների կողմից մշակված **27 բովանդակային նյութի** փորձաքննություն: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի մասնագետների կողմից փորձաքննության են ենթարկվել ՀՄԿ և ՏՄԱԿ-ների մասնագետների, կրթական տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մոդուլային դասընթացների նյութեր, խաղեր, վարժություններ, մասնագիտական իրազեկող նյութեր, ձեռնարկներ, որոնք տեղակայվել են ՀՄԿ կայքում և սոցիալական հարթակներում, ՏՄԱԿ-ների սոցիալական ցանցերի էջերում, ներկայացվել են տպագրության կամ կիրառվում են սեմինարների, դասընթացների իրականացման նպատակով:

## 8. Հանրային կապեր և իրազեկում

Հանրային կապերի ստեղծման ու իրազեկման աշխատանքներն իրականացվել են ՀՄԿ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից:

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** իրականացվել է կրթության ոլորտում համընդհանուր ներառական համակարգի կազմակերպման և իրականացման գործընթացի լուսաբանման և իրազեկման **104 աշխատանք՝**

- **Կենտրոնի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկում 72 գրառումների և իրազեկող հոդվածների միջոցով:** Կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումների, վերապատրաստումների, սեմինարների և այլ բնույթի աշխատանքների լուսաբանման և հրապարակման համար Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակիցները կատարել են իրազեկող աշխատանքներ (գրառումների տեքստերի կազմում, խմբագրում-սրբագրում, թարգմանություն, տեսանյութերի ստեղծում, լուսանկարահանում, նկարների մշակում, հրապարակում Կենտրոնի պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում): Այս գործընթացը նպաստում է հանրության՝ մասնագետների, ծնողների և շահագրգիռ այլ կառույցների իրազեկված և տեղեկացված լինելուն:
- **Կլոր սեղան-քննարկումների, աշխատաժողովների, միջոցառումների կազմակերպում և լուսաբանում, միջազգային փորձի և հանրային կարծիքի ուսումնասիրում**: Կրթության ոլորտում, այդ թվում՝ Կենտրոնում իրականացվող միջոցառումների շրջանակում կազմակերպվել և լուսաբանվել է **32 միջոցառում** (աշխատաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, վեբինարներ և այլ միջոցառումներ):
  - ✓ Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ միջոցառման կազմակերպում և իրականացում:
  - ✓ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների տնօրենների և ՀՄԿ անձնակազմի մասնակցությամբ ամենամյա կլոր սեղան-քննարկումների կազմակերպում:
  - ✓ Կլոր սեղան-հանդիպումների կազմակերպում մանկավարժահոգեբանական աջակցություն ստացող երեխաների ծնողների հետ առկա և առցանց ձևաչափով:
  - ✓ «Պերկինս միջազգային» կազմակերպության հետ համագործակցությամբ

իրականացվող վեբինարների շարքի հայերեն կոնտենտի ստեղծում և հրապարակում:

- ✓ ՀՄԿ «Միասին» թատերախմբի կողմից իրականացված ներկայացումների լոգիստիկ աշխատանքների իրականացում և լուսաբանում:

  Գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության հուշագրերի կազման և կնքման, աշխատանքային հանդիպումների և քննարկումների կազմակերպում և իրականացում:

Հանրային իրազեկման ապահովման և բաժնի գործառույթների իրականացման շրջանակներում կատարվել են նաև տարաբնույթ այլ աշխատանքներ, այդ թվում՝

- **«Առցանց գրադարան» բաժնի վարում:** Կենտրոնի կայքի «Առցանց գրադարան» բաժինը համալրվել է 30 **էլեկտրոնային գրքերով և հոդվածներով:**
- **Կայքի ծրագրավորում և սպասարկում:** Կենտրոնի կայքը շարունակաբար համալրվում և արդիականացվում է: Գրառումների, էջերի ծրագրավորման և կայքի սպասարկման աշխատանքների թիվը՝ **72:**
- **Փաստաթղթերի կազմում, մշակում:** Կազմվել և մշակվել են ներառական կրթության ոլորտի իրավական ակտերին վերաբերող առաջարկություններ, գործընկեր կազմակերպությունների և Կենտրոնի գործունեությանն առնչվող **25 գրություններ, իրավական և այլ փաստաթղթեր** (հրամաններ, պայմանագրեր, համաձայնագրեր, հուշագրեր, գրառումների իրավաչափության ստուգում, հավաստագրեր, դպրոցների և ՆՈւՀ-երի ցուցակների ճշտում և թարմացում և այլն):
- **Նյութերի խմբագրում-սրբագրում:** Իրականացվել է Կենտրոնի կողմից մշակված մանկավարժահոգեբանական նյութերի, իրավական ակտերի, հոդվածների, կայքում տեղադրված **206 գրառման** և **14 ձեռնարկի, հետազոտությունների, մոդուլների և մեծածավալ այլ նյութերի** խմբագրում-սրբագրում:
- **Նյութերի թարգմանություն:** Իրականացվել է Կենտրոնի կողմից մշակված 175 մանկավարժահոգեբանական նյութերի, հոդվածների, կայքում տեղադրվող գրառումների, ինչպես նաև կայքի հայերեն բովանդակության թարգմանություն:
- **Նյութերի ձևավորում:** Իրականացվել են Կենտրոնի գործունեության, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվող տարբեր միջոցառումների և ծրագրերի լուսաբանման և հանրայնացման գործընթացի համար անհրաժեշտ **772** նկարների, էլ. բացիկների, լուսանկարների, տեսանյութերի, ձեռնարկների, աշխատանքային գիրք-տետրերի, զարգացնող նյութերի, ինչպես նաև կայքում տեղադրվող նյութերի գեղարվեստական և գրաֆիկական ձևավորման աշխատանքներ:

## 9. Գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրեր

- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA Armenia) հետ համագործակցությամբ իրականացվող «Սեռական և վերարտադրողական առողջություն. մտավոր հաշմանդամություն ունեցող դեռահասների հետ աշխատանքի առանձնահատկությունները» թեմայով դասընթացների իրականացում:
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՄԱԿ-ի

մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հետ համագործակցությամբ «Կրթական համակարգի շարունակական հզորացման ապահովում» ծրագրի իրականացում:

- ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ և Ճապոնիայի կառավարության աջակցությամբ «Հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության (ՀԱՀՍԱ) ներդրման պիլոտային ծրագրի» իրականացում ուսումնական հաստատություններում:
- ՀՀ ՆԳՆ Սեյսմիկ Պաշտպանության Տարածքային Ծառայության (ՍՊՏԾ) հետ կնքված համագործակցության հուշագրի շրջանակում ուսումնական հաստատություններում սեյսմիկ ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև ոլորտի շրջանակներում կրթության կազմակերպման գործընթացի մասնակիցների իրազեկվածության և պատրաստվածության մակարդակի բարձրացմանն ուղղված սեյսմապաշտպանության թեմայով ուսումնական նյութերի, տեղեկատվական-մեթոդական ուղեցույցների մշակում, ստեղծում և տարածում, ՍՊՏԾ և ՀՄԿ մասնագետների համատեղ ուժերով ուսումնական հաստատությունների պատասխանատու անձնակազմերի, ուսուցիչների, ինչպես նաև աշակերտների, մասնավորապես՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում:
- Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) «ԱՅՈ» ֆոնդահայթայթման հարթակի հետ համագործակցության շրջանակներում ՀՄԿ «Միասին» թատերախմբի կողմից նոր ներկայացումների բեմականացման և բեմադրման աշխատանքների իրականացում:
- «Արաբկիր» բժշկական համալիրի և «Կյանքի ճանապարհ» բարեգործական հիմնադրամի համագործակցությամբ «Էպիլեպսիա՝ ստվերից դուրս» խորագրով համաժողովին ակտիվ մասնակցություն և ներգրավվածություն:
- Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակում կրթական, մշակութային և մեթոդական ուղղություններով մի շարք միջոցառումների իրականացում:
- «Պերկինս միջազգային» կազմակերպության հետ համագործակցությամբ վեբինարների շարքի իրականացում, որը միտված է լավագույն փորձի փոխանակման միջոցով երեխաներին կրթական որակյալ ծառայություններով ապահովելուն:
- UCLA համալսարանի Բնակչության վարքագծային առողջության բաժնի կողմից հեղինակած FOCUS տոկունության զարգացման ուսումնական ծրագրի իրականացում Քվեբեկի Հայկական բժշկական ասոցիացիայի (AMAQ) և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ համագործակցությամբ՝ ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ:
- Հոգեկան առողջության հայկական ասոցիացիայի հետ համագործակցությամբ իրականացվող «Իրավունքներ, ծառայություններ, մասնակցություն. Հայաստանում հոգեկան առողջության համապարփակ շրջանակի խթանում» ծրագրի շրջանակում «Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի գործունեության կազմակերպումը դպրոցում» թեմայով երկօրյա վերապատրաստման դասընթացների իրականացում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, ժողովրդավարության

Զարգացման Հիմնադրամի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի և Հոգեկան առողջության հայկական ասոցիացիայի կողմից՝ Եվրոպական միության (European Union in Armenia) աջակցությամբ:

- «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակում «Ռեսուրս սենյակ» պիլոտային ծրագրում ներգրավված ուղեկցողների կարողությունների զարգացում և աջակցություն:

## Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակում «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ը 2026թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացրել է հետևյալ միջոցառումները:

Ծրագրի շրջանակներում շարունակական վերապատրաստումներ և մենթորական աջակցություն են ստացել Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Տավուշի, Սյունիքի, Լոռու մարզերի և Երևանի՝ ծրագրում ընդգրկված դպրոցների մանկավարժներ: Դպրոցների բաշխումն իրականացնելու համար համագործակցային աշխատանքներ են իրականացվել մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունների հետ:

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝**

### 1. Դպրոցների ներգրավվածությունն ու բաշխումն ըստ մարզերի

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիրը շարունակել է հաջողությամբ իրականացվել ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: Հաշվետու ժամանակահատվածում 3 հիմնական բաժիններով՝ **«Ապահով և անվտանգ կրթական միջավայր»**, **«Երեխաների հոգեկան առողջության և հոգեսոցիալական հմտությունների զարգացում»**, **«Ներառող դասավանդման և ուսումնառության ռազմավարություններ»**, 50-ժամյա վերապատրաստման դասընթացներ և մենթորական աջակցություն է իրականացվել է 92 դպրոցներում:

**Գծապատկեր 1. Դպրոցների բաշխվածությունն ըստ մարզերի**




**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում ծրագրում** ընդգրկվել է 69 մենթոր և 90 դպրոց, որոնցից՝ 6-ը՝ Արագածոտնի մարզում, 11-ը՝ Շիրակի մարզում, 8-ը՝ Կոտայքի մարզում, 9-ը՝ Գեղարքունիքի մարզում, 9-ը՝ Արարատի մարզում, 4-ը՝ Վայոց ձորի մարզում, 11-ը՝ Արմավիրի մարզում, 6-ը՝ Սյունիքի մարզում, 8-ը՝ Լոռու մարզում, 7-ը՝ Տավուշում և 11-ը՝ Երևանում (գծ.1)։

- **Արագածոտնի մարզում՝** Աշտարակի Սմբատ Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոց, Արագածի թիվ 2 միջնակարգ դպրոց, Ապարանի Հ. Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց, Աշտարակի Ն. Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց, Աշտարակի Գ. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց, Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց
- **Շիրակի մարզում՝** Անուշավանի միջնակարգ դպրոց, Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց, Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց, Վահրամաբերդի միջնակարգ դպրոց, Փանիկի միջնակարգ դպրոց, Վարդաքարի միջնակարգ դպրոց, Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց, Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց, Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց, Գյումրու թիվ 27 հիմնական դպրոց, Գյումրու թիվ 10 հիմնական դպրոց
- **Կոտայքի մարզում՝** Քասախի Ռ. Գևորգյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց, Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց, Չարենցավանի Ե. Չարենցի անվան թիվ 5 հիմնական դպրոց, Աբովյանի թիվ 8 հիմնական դպրոց, Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց, Հրազդանի Հ. Թումանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց, Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան թիվ 4 հիմնական դպրոց, Հրազդանի Ա. Շիրակացու անվան թիվ 6 հիմնական դպրոց
- **Գեղարքունիքի մարզում՝** Գավառի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց, Ներքին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց, Սարուխանի Ս. Մակարյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց, Գավառի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8 միջնակարգ դպրոց, Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց, Արծվանիստի միջնակարգ դպրոց, Վարդենիսի թիվ 3 հիմնական դպրոց, Գավառի Ս. Քոչարյանցի անվան թիվ 1 հիմնական դպրոց, Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց

- **Արմավիրի մարզում՝** Այգեկի Մ. Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց, Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց, Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան թիվ 12 հիմնական դպրոց, Հացիկի Ա. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց, Վարշապատի Երվանդ Օտյանի անվան թիվ 7 հիմնական դպրոց, Փարաքարի միջնակարգ դպրոց, Մրգաշատի Մ. Մաղաքյանի անվան միջնակարգ դպրոց, Արևիկի միջնակարգ դպրոց, Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց, Լուկաշինի Հ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց, Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց
- **Վայոց ձորի մարզում՝** Մալիշկայի Մ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց, Վերնաշենի միջնակարգ դպրոց, Գետափի միջնակարգ դպրոց, Ագարակաձորի Յու. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց
- **Արարատի մարզում՝** Վեդու Խ. Սողոմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց, Արալեզի միջնակարգ դպրոց, Մասիսի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց, Նորաբացի Մ. Ալեյանի անվան միջնակարգ դպրոց, Նոր Կյանքի միջնակարգ դպրոց, Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջնակարգ դպրոց, Արարատ քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոց, Մասիսի Վ. Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոց, Արարատ գյուղի թիվ 3 միջնակարգ դպրոց
- **Լոռու մարզում՝** Վանաձորի Րաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոց, Վանաձորի Րաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոց, Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց, Վանաձորի Ս. Շահումյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց, Վանաձորի Ա. Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց, Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց, Վանաձորի Պ. Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց, Վանաձորի Վ. Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոց, Բազումի միջնակարգ դպրոց
- **Տավուշի մարզում՝** Իջևանի Ս. Սարգսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց, Կողբի Ջ. Ղարախանյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց, Ջուջևանի միջնակարգ դպրոց, Կողբի Բ. Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց, Հաղթանակի միջնակարգ դպրոց, Վազաշենի միջնակարգ դպրոց, Հովքի միջնակարգ դպրոց
- **Սյունիքի մարզում՝** Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց, Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց, Կապանի թիվ 1 հիմնական դպրոց, Աշոտավանի միջնակարգ դպրոց, Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց, Խոտի միջնակարգ դպրոց
- **Երևան՝** Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 հիմնական դպրոց, Հ. Պողոսյանի անվան թիվ 82 հիմնական դպրոց, Հակոբ Օշականի անվան թիվ 172 հիմնական դպրոց, Դ. Հովսեփյանի անվան թիվ 191 հիմնական դպրոց, Ծովակալ Իսակովի անվան թիվ 132 հիմնական դպրոց, Անդրեյ Սախարովի անվան թիվ 69 հիմնական դպրոց, Ա. Միկոյանի անվան թիվ 166 հիմնական դպրոց, Գուրգեն Մահարու անվան թիվ 176 հիմնական դպրոց, Գ. Բաղյանի անվան թիվ 141 հիմնական դպրոց, Գարեգին Նժդեհի անվան թիվ 161 հիմնական դպրոց, Նելսոն Ստեփանյանի անվան թիվ 71 հիմնական դպրոց

## 2. Վերապատրաստման դասընթացների անցկացում Ծրագրում ընդգրկված դպրոցներում

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում՝**

- Անցկացվել են ծրագրում ընդգրկված դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ ըստ 3 հիմնական բաղադրիչների՝ **Ապահով և անվտանգ կրթական միջավայր, Երեխաների հոգեկան առողջության և հոգեսոցիալական հմտությունների զարգացում, Ներառող դասավանդման և ուսումնառության ռազմավարություններ**, որոնց մոդուլները վերանայվել և թարմացվել են տարվա սկզբում: Դասընթացները իրականացվում են ինտերակտիվ մեթոդներով, ընդգրկում են սահիկաշար և տարբեր վարժություններ՝ մասնակիցների հմտություններն ու գիտելիքները հնարավորինս արդյունավետ զարգացնելու նպատակով:
- Ընդհանուր առմամբ ծրագրի շրջանակներում **2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** վերապատրաստում է անցել **1813** մանկավարժ:

## 3. Մենթորական աջակցության տրամադրում Ծրագրում ընդգրկված դպրոցների ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին

Ծրագրում ընդգրկված դպրոցների ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին շարունակական մենթորական աջակցություն է տրամադրվել հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Դասի համատեղ պլանավորում,
- Դասի պլանների համատեղ քննարկում և մեկնաբանում
- Դասալսումներ
- Դասի վերլուծություն
- Մասնագիտական քննարկումներ

**2026թ. առաջին կիսամյակի ընթացքում** շարունակական մենթորական աջակցություն է ստացել **1451** ուսուցիչ և ուսուցչի օգնական:

## 4. Ծրագրի արդյունքների գնահատում և մշտադիտարկում

- Ծրագրի արդյունավետությունը գնահատվում է համակարգողի և մշտադիտարկողների կողմից գնահատման մշտադիտարկման ընթացակարգի և գործիքակազմի համաձայն:
- Ծրագրում ներգրավված են 1 համակարգող, 7 մշտադիտարկող:
- Համակարգողի և մշտադիտարկողների կողմից իրականացվել են մենթորների աշխատանքի ժամային գրաֆիկների վերահսկողություն, մենթորական աջակցություն ստացող ուսուցիչների հետ հետադարձ կապի ապահովում, մենթորների ամսական հաշվետվությունների վերլուծություն: Այս փուլի գնահատումը իրականացվել է հունիս ամսվա ընթացքում:

## 5. Հանդիպումներ, խորհրդատվություններ

Ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով՝

- Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում հանդիպում է իրականացվել մենթորների հետ՝ քննարկելու գործընթացի դժվարություններն ու հաջողությունները: Այս հանդիպման արդյունքում բարելավվել են վերապատրաստման և աջակցություն տրամադրման մոտեցումները:

## 6. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների համար ներառող դասավանդման վերաբերյալ ձեռնարկի մշակում և հրատարակում

Ձեռնարկի մշակման և հրատարակման գործողությունները կիրականացվեն հաշվետու վերջին ժամանակահատվածում:

Կենտրոնի անվանումը՝ «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն՝ (ստորագրություն) Լ. Մնացականյան (անուն, ազգանուն)

01.07.2026թ.